№ 113 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3 **1895** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3 № 113

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զեռքերը ծալած նստել են. Հեռագիրներ. Կարծիքներ Կ. Պոլսի ցոյցի մասին. Դիպլոմատիան և հայոց հարցը.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատաստանական դահլիճից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քեամիլ-փաշա. Նամակ Թիւրքիայից. Նամակ Ամերիկայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իսլամի խալիֆան.

ԶԵՌՔԵՐԸ ԾԱԼԱԾ ՆՍՏԵԼ ԵՆ

Հարկաւոր է միթէ ասել, որ ոչ մի կառավարութիւն, ոչ մի ոստիկանական ոյժ, ինչքան էլ նա ուժեղ չը լինի, անկարող է արմատախիլ անել երկրի մէջ աւազակութիւնները և գողութիւնները, եթէ ինքը տեղական ազգաբնակութիւնը, ամեն տեսակ խորամանկ, ապօրինի ճանապարհներով աջակցում է աւազակներին, ապաստան է տալիս նրանց, թաքցնում է նրանց հետքերը:

Տարաբաղդաբար, այդ տարրական ճշմարտութիւնը պէտք է հալել մեր ժողովրդի ականջներում, որը, ինչպէս ցոյց են տալիս փաստերը,—յիշեցէք Նաբիի արշաւանքները Զանգեզուրի և Նախիջևանի գաւառներում, և Քեարամիկը Ղազախի գաւառում,—դեռ այնքան խակ, թուլամտի է և զուրկ ինքնապաշտպանութեան զգացմունքից, որ իրաւունք է համարում տարիներով ձեռքերը ծալած նստել, սպասելով որ ադմինիստրացիան կամ ոստիկանութիւնը ուն մենակ ոչնչացնի աւազակային խմբերը, և ազատի երկիրը նրանց արշաւանքներից:

Մենք հաւատում ենք, որ անվեհեր կազակների խմբերը,—եթէ միայն նրանք ուներային երկրին ծանօթ և անձնուէր առաջնորդներ,—շատ կարճ միջոցում ցիր ու ցան կանէին Նաբիի խմբերը. բայց ի՞նչ անեն կազակների խմբերը, կամ ինչ կարող են անել ամենախիստ կարգադրութիւնները, երբ Զանգեզուրի և Նախիջևանի գաւառներում աւազակային խմբերի ապաստարանները ոչ թէ միայն անմատչելի կիրճերն են, կամ անանցանելի անտառները, այլ նոյն իսկ ազգաբնակութիւնը, թուրք գիւղերը, որոնք սերտ յարաբերութիւն հաստատելով Նաբիի խմբի հետ, կամ թաքցնում, կամ փախցնում, կամ սպառազինութեան նոր պաշար են տալիս նրան...

Այդպիսի պայմաններում անմտութիւն է յոյս դնել միմիայն պոլիցիայի վրա: Անհրաժեշտ է, որ ինքը ազգաբնակութիւնը աջակցի կառավարութեանը՝ աւազակութիւնները ոչնչացնելու համար:

Մենք, ճշմարիտ, երբէք երևակայել չէինք կարող, թէ Նախիջևանի և մանաւանդ լեռնոտ Զանգեզուրի բնակիչները, որոնք պարծենում են իրանց քաջարի նախահայրերի թողած յիշատակներով, այնքան վախկոտ և այնքան թուլամտի կը լինեն, ինչպէս այդ ցոյց է տալիս երեք տարվայ պատմութիւնը:—Գիւղերում յարաբերութիւնները դադարած են, ժողովուրդը յուսահատութեան մէջ է, երթևեկութիւն չը կայ, Նաբին թալանեց այս ինչ գիւղը, անպատուեց այն ինչ գիւղացիներին, սպառնալիք ուղարկեց այն ինչ անձնաւորութեան,—ահա այն անվերջ լուրերը, որ գալիս են Զանգեզուրից և Նախիջևանից, կարծէք թէ այդ գաւառներում տղամարդիկ չեն ապրում, այլ միայն կանայք...

Ուրեմն, ո՞ր „ծակն են մտել Զանգեզուրի Ջահիլ տղերքը“: Միթէ քիչ կան այնտեղ լաւ ձիավարներ և լաւ հրացանաձիգներ: Միթէ քիչ կան այդ գաւառներում երիտասարդ զինուորներ, որոնք զինուորական ծառայութիւնը աւարտած՝ դարձեալ իրանց տներումն են գտնվում: Ի՞նչ են անում դրանք...

Ուրիշ երկիրներում, երբ խօլէրա է պատահում, առաջինը հասարակութիւնն է դիմում ինքնօգնութեան. երբ հրդեհ է հատահում, առաջինը հարևաններն են օգնութեան հասնում: երբ մէկի տունը թալանում են, անցորդներն են ընկնում գողերի ետևից,—իսկ մեզ մօտ, մեր ժողովրդի մէջ, թէ խօլէրայի, թէ հրդեհի, թէ աւազակութեան, թէ հասարակ գողութեան ժամանակ,—ամենքն էլ բերանը բաց, ձեռքերը ծալած նայում են, սպասելով որ պոլիցիան գայ, որ ադմինիստրացիան վրա հասնի...

Զեռքերը ծալած նստել, և յոյսը դնել միմիայն պոլիցիայի վրա, միմիայն ադմինիստրացիայի վրա, այդ էլ այն միջոցին, երբ նոյն իսկ ազգաբնակութեան մի մասը ապաստան է տալիս աւազակային խմբերին, ինչպէս այդ ապացուցված է Զանգեզուրում,—մեծ յանցանք է, աներելի յանցանք: Թող ժողովուրդն էլ միանայ պոլիցիայի հետ, աջակցի նրան, թող կազակների և պոլիցիայի հետ միասին աւազակների ետևից ընկնեն տեղացի կարիները, և այն ժամանակ ոչ ոք ամօթից չէր կարմրի, որ մի Նաբի, մի քանի իր նման սրիկաների հետ միասին, կարողանում է մի քանի տարի շարունակ ամբողջ երկու գաւառ՝ սանձարձակ ապաստակութիւնների ասպարէզ շինել...

ՀԵՌԱԳԻՐ

(Ռուսաց գործակալութեան)

Կ. Պոլիս, 1 հոկտեմբերի: Տրապիզոնի վերջին խառնակութիւնների ժամանակ սպանված են մօտ 200 հայեր: Զանազան դաւանութիւններին պատկանող քրիստոնեայ ազգաբնակութիւնը, որը բնակվում է առանձին թաղում, և այդ պատճառով ենթակայ է յարձակման վտանգին, ապաստանվեց միջնաբերդում: Տրապիզոնի ջրերը հասաւ ռուսաց մի նաւ, որը լողում է Ռուսաստանի երկարութեամբ, առևտրական նաւի միջոցով պայմանաւոր հաղորդակցութիւն պահպանելով քաղաքի հետ: Նաւին յանձնարարված է ռուսաց հպատակների պաշտպանութիւնը:

ԿԱՐԾԻՔՆԵՐ Կ. ՊՕԼՍԻ ՑՈՅՑԻ ՄԱՍԻՆ

«Standard», որպէս և ուրիշ անգլիական մի քանի լրագիրներ թոյլ են տալիս իրանց դատապարտել հայերի արած ցոյցը:

«Այդ վարմունքը, ասում է պահպանողական լրագիրը, մանաւանդ ներելի չէ այն պատճառով, որ Անգլիայի ջանքերը յօգուտ հայերի արդէն սկսեցին բերել պտուղներ: Իրաւ է, որ Բ. Դուռը ամեն կերպ աշխատում էր ձգձգել բանակցութիւնները, և դժուարութիւնները աւելի էլ մեծացան մեացած պետութիւնների կասկածութեան պատճառով, բայց եթէ հայերը կարողանային մի փոքր էլ համբերել, հաւանական է, որ սուլթանը ստիպված կը լիներ ձեռք առնել այն միջոցները, որոնց վրա պնդում էր լորդ Սալսբիւրին: Հայոց կոմիտէները մեծ սխալ գործեցին, ցոյց տալով Եւրոպային, թէ ինչպէս իրանք դիտեն կոտորածներ սարքել:»

Նոյնպիսի կարծիք է յայտնում և «Daily Telegraph» լրագիրը: Սակայն «Times» ասում է, որ այդ անցքերը աւելի, քան որ և է դիպլոմատիական առաջադրութիւնները, պէտք է համոզեն սուլթանին, որ վտանգաւոր է նրա համար այն քաղաքականութիւնը, որին հետևում էր նա մինչև այժմ:

Ազատամիտ «Daily News» մի շատ եռանդոտ յօդուածում յայտնում է, որ Կ. Պոլսի խառնակութիւնները, որպէս և Սասունինը, կրկին անգամ ապացուցանում են, որ քրիստոնեայ ցեղերը, և մանաւանդ հայ ցեղը, չեն կարող թիւրքերի կառավարութեան տակ մնալ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՍԼԱՄԻ ԽԱԼԻՖԱՆ

II

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել մի երկու օրինակ սուլթանների այդպիսի քաղաքականի գործերից, որոնցից ընթերցողը դաղափար կարող է կազմել:

Սելիմ I Եավուզ (վէս), Եգիպտոսը տիրելով՝ խալիֆայութիւնը ձեռք բերելուց յետոյ, որպէս զի բոլորովին իր կողմը գրաւէ իսլամութիւնը և Ալլահին մի աւելի մեծ ծառայութիւն մատուցած լինի, ֆիրման տուեց իր իշխանութեան տակ ապրող բոլոր քրիստոնեաներին բռնի իսլամացնել, նրանց եկեղեցիները մզկիթի վերածել և հակառակողներին սրածել: Որքան կաչառքներով, որքան տառապանքներով և սոսկալի չարչարանքներով քրիստոնեաները կարողացան համոզել Սելիմին, տրված հրամանը յետ առնելու համար: Կաչառված մեծ-վիզիրը, եթէ անելանելի վիճակի մէջ չը գցէր Սելիմին, դժուար թէ քրիստոնեաները խուսափէին այդ ընդհանուր կոտորածից: Խորամանկ պաշտօնեան ասում է՝—«Եթէ քրիստոնեաներին կոտորենք, ո՞րտեղից կարեոր փողը հաւաքենք երկիրը կառավարելու համար: Չէ՞ որ իսլամ ժողովրդին հարկի չենք կարող ենթարկել:» Սուլթանը կիսով չափ յետ է առնում հրամանը, բայց և այնպէս ստիպում է խլել քրիստոնեաներից բոլոր քարաչէն, կամարակապ եկեղեցիները, մզկիթի վերածել և առաջարկել քրիստոնեաներին, որ եթէ ցանկանում են, նորերը չենեն փայտածածկ:

Սուլթան Մուրադ III, 1583 թվին, երբ կատարում էր որդու՝ դահաժառանգ Մէհմէդի թլփատման հանդէսը, այն բազմաթիւ հանդէսները, որոնց պատարաստութիւնները բիւրաւոր բանտորներ տարիների ընթացքում հաղիւ էին գլուխ բերել, որոնց արդ ու զարդը միլիոններ էր կուլ տուել, արծաթ ու ոսկին, մարգարիտ ու գոհարը չէքիներով *) էր գործադրել, ամիսներով ամբողջ Ստամբուլը ողողվել էր քաղցրաէնկիներով, օշարակներով և վարդաբուլերով, էլ ճրագալոյցներ, հրախաղութիւններ, լարախաղութիւններ, ըմբշամարտութիւններ, սուսերամարտ թշուառ բռնակներ, որոնք իրանք իրանց էին յօշոտում, նուագածու խմբեր, պարողներ, թափորներ թընդացնում էին Բոսֆորի ափերը. ճաշկերոյթներին, ընթրիքներին հարիւր հազար մարդիկ էին մասնակցում, հրաւիրված հանդիսականները և օտար պետութիւններից եկած ներկայացուցիչները իրանց թանկագին նուէրներով ստիպվել էին սուլթանի մայրաքաղաքում: Խալիֆը իսլամ աշխարհին մի նոր surprise անելու համար և միւսիւլմաններին մի աւելի հոգեկան մխիթարութիւն պատճառելու տենչով, եօթ հազար հինգ հարիւր քրիստոնեայ մանուկներ խլել էր տուել իրանց թշուառ ծնողներից և դահաժառանգի հետ թլփատել:

Հատորներ կը կազմվի, եթէ մենք օսմանեան սուլթանների քրիստոնեայ հպատակներին իսլամացնելու և մահմէդականութիւնը տարածելու, բազմացնելու դիտամբ կատարած բարբարոսութիւններն ու անպիտութիւնները մէկ մէկ նկարագրէինք: Վերջացնում ենք մեր խօսքը մի երրորդ օրինակով: Դեռ անցեալ դարու վերջերում, 1789 թվին, Սելիմ III սուլթանը, իր գահակալութեան երրորդ օրը, ծպտեալ դուրս եկաւ մայրաքաղաքը լրտեսելու: Իսլամականութեան ջերմ պաշտպան և կրօնամոլ իսլամ լինելը գործով ապացուցանելու համար, այդ օրը նա գաղտնաբար երեք անմեղ քրիստոնեայ սպանել տուեց, որոնցից առաջինը մի քսան տարեկան հայ պատանի էր: Սրա յանցանքը մաքուր և կոկ հագնված լինելն էր, որը դուր չեկաւ իսլամի պետին: Թշուառ պատանին քրիստոնեաներին արտօնված միայն սև գոյնով վայելուչ շորեր ունէր հագին, այնպէս որ Սելիմ սուլթանը, երկար քննելուց յետոյ, ճարահատեալ հրամայեց պատանու սև լաչիները (կօչիկ) հանել ոտքերից: Պատանու կարմիր գուլպաները և դեղին մասերը շարժեց Սելիմի ժպիտը, որը ինքնաբաւական ասաց.

—Չեմ իմանում, որ գեավուրներդ այդ գոյները բանեցնելու արտօնութիւն չունէք: Տարէք Պալըքխանէ (կառավարան):

Բացի իսլամի տարածման համար կատարած այսպիսի մեծամեծ բարբարոսութիւններից, սուլթանները երկրի ղեկը յանձնած էին իսլամի իլչիներին: Առանց նրանց խորհրդի, առանց նրանց աջակցութեան և ղեկավարութեան, առանց նրանց վճռի ու համաձայնութեան սուլթանները ոչ մի գործ չեն արել և ոչ ֆերման ստորագրել: Թէ պալատում, թէ քաղաքական իշխանութեան մէջ և թէ զինուորականների դասում ամենանշանաւոր տեղը իլչիներին է եղել և ամեն անգամ աւարի ամենաչաղ բաժինը, եկամուտի ամենաապահով մասը նրանց է հասել:

Ոչ միայն իլչիները ամեն մի քաղաքում, ամեն մի աւանում նշանաւոր տեղ են բռնել և տիրացել՝ ինչպէս վագֆին (կղերին, մզկիթներին յատկացրած կալուածներ), նոյնպէս հոգևորականութեան յատկացրած գաւառներին, կղզիներին, անտառներին և դաշտերի եկամուտներին, այլ պետութեան գանձարանից ամեն տարի նշանաւոր գումար բաժանվել է նրանց՝ որպէս վարձատրութիւն: Մեքքէի շերիֆը, բացի տարեկան այնտեղ գնացող 80,000-ից աւել հաջիներից ստացած նուէրներից և քաղաքի նշանաւոր եկամուտներից, մի ահագին գումար էլ օսմանեան գանձարանից է ստանում: Գանձարանից մեծամեծ թոշակ ստացող Մեքքէի, Մէդինէի մէջ ապրող իլչիների և շրջակայքում բնակվող շէյխերի թիւը երեք-չորս հարիւրի է հասնում: Սուլթանի զինուորականները, քաղաքական պաշտօնեաները տարեկան մի ամսական հաղիւ են ստանում, այն ինչ Մալիէի (ֆինանսի) տեսուչը պարտաւոր է ամեն տարի որոշ ժամանակին, նոր կարված ոսկի դրամով, առանձին-առանձին ծրարներով միանուագ ուղարկել այդ բոլոր իլչիներին ու շէյխերին նրանց դարեւոր թոշակի շարունակութիւնը: Ապա ամեն տարի հաջիների տարած և նրանց հետ ուղարկված նուէրները:

Մի առանձին պաշտօնակատար, ուղեկից սպասաւորների մեծ բազմութեամբ, հանդէսով, պատշաճաւոր դրօշակով Քէաբբէի (այն տաճարը, որտեղ գտնվում է սև քարը, և նստում է Մեքքէի Շերիֆը) ամաւոր չինութիւնը ծածկելու համար տանում է Մեքքէ սուլթանի ուղարկած այդ վրանը, որ կարվում է կարմիր մահուդից, ոսկեթելով ասեղնագործած: Մինչև անգամ եթէ հաջիների թիւը որ և իցէ պատճառով 80,000-ի չէ հասնում, սուլթանը պարտաւոր է ադքատներին, կարօտեալներին գանձարանից փող բաժանել, ուխտաւորների պակասող թիւը լրացնել և ուղարկել դէպի նուիրական քաղաքները: Իսկ

Թէ գերմանական և թէ ֆրանսիական լրագիրները գտնում են, որ պետութիւնները յամենայն դէպս պէտք է հոգ տանեն, որպէս զի Կ. Պոլսի խառնակութիւնները աւելի էլ տխուր հետեւանքներ չունենան:

Բերլինի կիսապաշտօնական «Norddeutsche Algemeine Zeitung» ասում է. «Մահմետական ֆանատիկոսութեան բռնկումները, որ տեղի ունեցան վերջին անցքերի պատճառով Կ. Պոլսում, պէտք է, ի հարկէ, գլխաւորապէս բացատրել հայերի առիթ տուող վարմունքով: Սակայն այդ չը պէտք է արգելէ Բ. Դրանը, հէնց իր շահերի տեսակէտից, վերջ դնելու սոֆթաների և մահմետական ֆանատիկոսների գործողութիւններին:»

Պարիզի «Temps» լրագիրն ևս յոյս ունի, որ կաջողվի առաջն առնել մահմետական ֆանատիկոսութեան բռնկմանը և որ «սուլթանը իր հեռատեսութեան և իրան յատուկ արդարասիրութեան կատարեալ ապացոյցը կը տայ նրանով, որ բոլոր հայերին պատասխանատու չի համարի նրանց հայրենակիցների մի խմբի յանցաւոր վարմունքի համար: Պէտք է յուսալ, որ սուլթանը ականջ կը դնի պետութիւնների խորհուրդներին և այդ պետութիւններից նրանց կողմը կանցնի, որոնք ցանկանում են տեսնել Թիւրքիան հանգիստ և, հետեւաբար, զօրեղ:»

Իշխան Բիսմարկի օրգան «Hamburger Nachrichten» կարական կերպով յայտնելով, որ Կ. Պոլսի կոտորածին առիթ են տուել բրիտանական դրդումները, ասում է.

«Հաղիւ թէ պետութիւնները, որոնք առանց այն էլ չափազանց կասկածով էին վերաբերվում անգլիական պահանջներին, պատրաստակամութիւն յայտնեն այժմ խաղալիք դառնալու Լոնդոնի մինիստրութեան ձեռքում: Ինչ որ վերաբերվում է բրիտանական նաւատորմը դէպի Դարդանել ուղարկելու սպառնալիքին՝ Բ. Դրան վրա ճնշում գործելու համար, մենք դրա իրագործումը հաւանական չենք համարում: Զէ՞ որ Թիւրքիան բոլորովին ուրիշ պայմանների մէջ է գտնվում և Անգլիայի ու Ռուսաստանի մէջ եղած մրցումը կարող է այն տեղը հասնել, որ վերջինը կորոշի փակել իր դռները Սև ծովի մօտ, և ապա իր բոլոր ոյժերով կը ձգտի հասնելու իր նպատակներին Ասիայում:»

Լրագիրը մի և նոյն ժամանակ ասում է, թէ բաւական չէ կարական դիմադրութիւն ցոյց տալ Անգլիային, պէտք է Բ. Դրան վրա ևս ազդել այնպէս, որպէս զի դրանց նման փատեր չը կրկնվեն: Զէ՞ որ Թիւրքիայում առանց դրան էլ շատ է հաւաքված հեշտ բռնավարվող նիւթ, որը կարող է լուրջ վտանգների աղբիւր դառնալ ամբողջ Եւրոպայի համար:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԴԻՊԼՕՄԱՏԻԱ

I Յօդուտ սասունցիների

Զէտերից «Times» լրագրին հեռագրում են, որ տիկին Գլադստօն կազմել այդ քաղաքում բարեգործական վիճակախաղ յօդուտ Սասունի խառնակութիւնների զոհերի: Լօրդ Սալսբիւրիին Մանչեստեր քաղաքից 25,000 ֆրանկ ուղարկեցին՝ յօդուտ հայկական նպաստող ֆոնդի:

II Ճիշդ է միթէ

«Հաւասի» գործակալութեանը գրում են Կ. Պոլսից. «Լուրեր են պատում, որ օտար պետութիւնների դեսպանները, որոնք մինչև այժմ մեծ անտարբերութիւն էին ցոյց տալիս, դիտաւորութիւն ունեն այժմ պաշտպանել ձերբակալվածներին և վերջ դնել հայերի տառապանքներին:

III Տէրրօր

«Daily Chronicle» լրագրի խօսքով, Ստամբուլում այժմ կատարեալ տէրրօր է տիրում: Միայն օտար ոյժի ներկայութիւնը կարող կը լինի հանգստութիւն վերադարձնել մայրաքաղաքին: Լրագիրն ասում է, որ լօրդ Սալսբիւրիի համար հարցը պարզված է վերջնականապէս, բայց այդ հարցին լուծումն տալու համար նրան հարկաւոր են. 1) անգլիական հասարակական կարծիքի օգնութիւնը (նա այդ ունի). 2) Եւրոպայի իրական լիազորութիւնները (նա կարող է դրանց ստանալ) և վերջապէս, 3) նիւթական երաշխաւորութիւն հայկական բարենորոգումները ի կատար ածելու համար, և այդ երաշխաւորութիւնը կարող է ունենալ՝ զօրքերին Զմիւռնիա ափ իջեցնելով:

IV Ամեն տեղ շարժում

Կ. Պոլսից «Berliner Tageblatt» լրագրին հեռագրում են, որ Թիւրքաց նահանգներում ևս տեղի ունեցան ծանր խառնակութիւններ. Թէքիրդաղում, Իզմիդում, Բօգոսթօում, Բրուսայում, մի խօսքով այն բոլոր նահանգներում, ուր գտնվում են հայեր, ծանր խառնակութիւններ են տեղի ունենում:

«Պատմում են, որ ցոյցի ժամանակ հայերը տանում էին անգլիական դրօշակ և նրա հետ միասին մի ինչ որ անյայտ դրօշակ: Նրանց խօսքերով, դա նրանց ապագայ թագաւորութեան դրօշակն էր, և նրա վրա նկարված էր առիւծ»:

V Հրաւէր

«Daily Telegraph» լրագիրը տպագրել է Էրզրումի արքեպիսկոպոսի մի նամակը, որ նա ուղարկել է լօրդ Սալսբիւրիին: Այդ նամակի մէջ արքեպիսկոպոսը աղաչում է լօրդ Սալսբիւրիին՝ չուտով օգնութիւն հասցնել հայ ժողովրդին, որովհետև յապաղման իւրաքանչիւր վայրկենի հետեւանքն են հաղարաւոր սպանութիւններ, բռնութիւններ և ամեն տեսակ զեղծումներ:

VI Կ. Պոլսի շուրջը

«Standart» հաղորդում է, որ Բոսֆորի ափերի վրա գտնվող քաղաքներում և գիւղերում անկարգութիւններ են տեղի ունենում:

VII Ցայտագիր

Վիէննայից հեռագրում են. «Կ. Պոլսում տեղի ուներ մինիստրների խորհուրդ՝ պոլիցիան վերակազմելու համար: Հայոց պատրիարքը մի յայտագիր է պատրաստում խառնակութիւնների առիթով»:

VIII Պաշտպան դրութիւնը

Կ. Պոլսից, «Новости» լրագրի յատուկ թղթակիցը հեռագրում է. «Երեքշաբթի օրից Կ. Պոլսում պաշտպան դրութիւն է յայտարարված, բայց առանց զինուորական դատարանի:»

IX Սպանվածների թիւը

«Daily Chronicle» լրագիրը գրում է. «Ամերիկական դեսպան Տէրրել հեռագրեց իր կառավարութեանը, որ Կ. Պոլսում խառնակութիւնների ժամանակ սպանված են մօտ 60 հոգի առաջին օրը. հետեւեալ օրը, երեկոյեան, սպանված են մօտ 80 մարդիկ, իսկ կալանաւորված և բանտարկված են մի քանի հարիւր հոգի»:

X Պատերազմական նաւեր

Լոնդոնից «Новости» լրագրին հեռագրում են, որ եւրոպական պատերազմական նաւերի Կ. Պոլիս գալը հանգստացրեց քրիստոնեայ ազգաբնակութիւնը:

XI Բարենորոգումներ

Քեամիլ-փաշան զբաղված է բարենորոգութիւնների նախագծով Հայաստանի և Մակեդոնիայի համար:

XII Խաղաղ բանակցութիւններ

Բէյտերի գործակալութեան տեղեկութիւնների համեմատ, Կ. Պոլսում տեղի ունեցած խառնակութիւնները հաղիւ թէ արգելք դառնան պետութիւններին շարունակելու բանակցութիւնները Բ. Դրան հետ՝ բարենորոգութիւնների նախագծի վերաբերմամբ: Պետութիւնները ցանկանում են խաղաղ միջոցներով վերակազմել Թիւրքաց վարչութիւնը և երաշխաւորել քրիստոնեայ ազգաբնակութեան ապահովութիւնը:

XIII Դեսպանների յայտագիրը

Վիէննայի «Politische Correspondenz» լրագրի մէջ հրատարակված է այն յայտագրի բնագիրը, որը սեպտեմբերի 20-ին դիպլոմատական մարմնի ատաղը ներկայացրել է Բ. Դրան: Այդ յայտագրի մէջ ասված է, որ դեսպանների ատաղաղոյնը և նրա ընկերները ստացել են ականատեսներից տեղեկութիւններ Ստամբուլի երէկվայ դէպքերի մասին: Այդ տեղեկութիւններից երեւում է, առաջին, որ մանաւոր մարդիկ ծեծում և սպանում էին ձերբակալվածներին, երբ սրանք ոստիկանութեան հսկողութեան ներքոյ անցնում էին, իսկ ոստիկանութիւնը չէր արգելում. երկրորդ, որ մանաւոր անձինք յարձակվում էին այնպիսի անձանց վրա, որոնք որ և է մասնակցութիւն չէին ունեցել ցոյցի մէջ. երրորդ, որ ոստիկանութեան չինութիւնների և քանտերի մէջ պահված վիրաւորվածներին ուղղակի սպանում էին առանց մտածելու:

Դեսպանները, երկիւղ կրելով, որ գուցէ այդպիսի անկարգութիւնների չարունակութիւնը վրա՝ առաջ բերի հանրային խաղաղութեան և իրանց՝ դեսպաններին յանձնված շահերի համար, հարկաւոր են համարում կառավարութեան լուրջ ուշադրութիւնը դարձնել իրերի այժմեան վիճակի վրա և պահանջել, որ մանաւոր մարդկանց արգելվի միջամտել անկարգութիւնները զսպելու գործի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Այս օրերս Շուշու դատարանում քննվում էր մի քաղաքական ոճրագործութիւն, որի նմանը հաղիւ թէ մի որ և է կիսաքաղաքակիրթ—չենք ասում քաղաքակիրթ—երկրում պատահած լինի, և որը գեղեցիկ կերպով բնորոշում է մեր «նահապետական կեանքով ապրող» գիւղացիների բիրտ բարք ու վարքը:

Ոճրագործութեան մասնակցել են և «գեղեցիկ սեռին» պատկանող անհատներ,—եթէ միայն կարելի է այդ անհատներին յատկացնել տղամարդի կողմից հնարած այդ չղջրորթ ածականը: Երկու կնոջ և մի տղամարդին մեղադրում են այս վերջինի կնոջ՝ քսան տարեկան Շ-ի սպանութեան մէջ:

Դէպքը հետեւեալ կերպով է կատարվում:

Սրանից 11 տարի առաջ, Մեղրի գիւղում ինը տարեկան որբ Շ-ին ամուսնացնում են մի չափահաս տղայի հետ: Մանուկ-ամուսինը գալով օտարի տուն, շարունակում է առաջվայ պէս պուրպիկ խաղալ, փողոցներում վազվզել իր հասակակից աղջկերանց հետ, մի խօսքով երեխայութիւններ անել, ինչպէս վայել է իր տարիքներին: Տնեցիք այնքան էլ խորթ աչքով չէին նայում նրան, հեռաւոր է նրանց գիւղը, ինչպէս ասեցինք, Զանգեզուրի գաւառի Գորիս գաւառակի մի գիւղ, ուստի ոչ ոք չէր կարող նրանց ասել, թէ ինչպէս պիտի նայեն մի ամուսնացած աղջկան, ինչպէս պիտի հոգան նրա մասին, ինչպէս պիտի ուսուցանեն նրան ամուսնական կեանքի գաղտնիքները: Ամեն ինչ ինքնաբերաբար պիտի գար, ինչպէս գալիս է ամեն ինչ գիւղերում, ինչպէս գալիս է ամեն ինչ ամեն տեղ, որտեղ ամեն ինչ ինքնաբերաբար գալիս է

նայում իրանց երեխայ հարսի չարութիւնների վրա, որովհետև նրանք առաջին անգամ չէին տեսնում իրանց երկրում այդպիսի փոքրահասակ հարսներ.—«կը մեծանայ՝ խելքի կը գայ»,—մտածում էին նրանք և սպասում, որ փոքրիկ Z-ը հասունանայ: Անցնում է հինգ տարի, ինը տարի, բայց նա դարձեալ մի և նույն երեխան է մնում, բնութիւնը չէր շտապում այդ խեղճի երակների հեղուկն այրել հասունացած երիտասարդի ցանկութիւններով: Նա հասունանում է քսան տարեկան հասակում, բայց արդէն ուշ է լինում, նրա օրերը համարված էին:

Դիւղացի ամուսինը, ձանձրացած իր անբնական դրութիւնից, սկսում է փաղաքշել իր կնոջը դագանակի հարուածներով. ուրիշ ճար էլ չունէր նա, չէր կարող բաժանվել իր կնոջից, որովհետև եկեղեցին այնպէս է կապում ամուսիններին իրար հետ, այնպէս պինդ, որ «էշը կարվի, տանդը ոչ»:

Z-ի հօրեղբայրը, խղճալով իր եղբօր աղջկայ վրա, վերցնում է նրան իր մօտ պահելու համար և ստիպում է փեսային՝ տարեկան մի ինչին գումար յատկացնել իր հեռացած կնոջը: Փեսան սկզբում վճարում է այդ գումարը, բայց յետոյ մտածելով խնայողութիւն անել և, գուցէ նորից ամուսնանալ, վճռում է մի կերպով ազատվել իր չարաբաղդ ամուսնուց:

Մի գեղեցիկ օր Z-ը յայտնում է իր հօրեղբօր կնոջ, որ գնում է գիւղի կանանց հետ զբօսնելու: Գնում է և այլ ևս յետ չէ դառնում: Ցնեցիք սկսում են փնտռել նրան և հետևեալ օրը գտնում են մի այգու մէջ խեղճի անշնչացած մարմինը: Սպանվածի բարեկամները հետամուտ են լինում և գտնում են այն երկու կանանց, որոնք Z-ի հետ գնացած են լինում զբօսնելու: Սրանք խոստովանում են ամեն ինչ. ասում են, որ փեսան նրանց փողով կաշառել է՝ իր կնոջը սպանելու նպատակով: Այդ անխիղճ կանայք խեղճին խաբելով տանում են մի յեղընկած այգի և թակով խեղդում, բայց որովհետև առողջակազմ զոհը հեշտութեամբ չէ մեռնում, վագրասիրտ ֆուրիաները սկսում են նրա գլուխը քարերով ջախջախել...

Դատարանը դատապարտեց մարդուն՝ 15 տարի, իսկ կանանց՝ 10 տարի տաժանակիր աշխատանքների:

Հ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

—

Սեպտեմբերի 24-ին

Ամսիս 20-ին, մեր յաջողդ Բագրատ վարդապետ Թաւաքալեանցը ժողովի էր հրաւիրել վիճակի բոլոր գործակալ և մի քանի ծխատէր քահանաներին: Մասնակցում էին 30-ից աւելի քահանաներ:

Յաջողդ-նախագահը ժողովը բացեց մի գեղեցիկ ատենաբանութեամբ, որով բացատրեց ընդհանրապէս քահանաների նշանակութիւնը և դրանց խաղալիք դերը: Ապա արծարծեց 20-ից աւելի զանազան եկեղեցական-կրօնական հարցեր, որոնց մէջ ուշադրութեան արժանի են հետևեալները.

1) Ամեն կերպ աշխատել գոլոցների թիւը աւելացնել, իսկ եղածները աւելի կանոնաւորել և ապահովել:

2) Զը նպաստել ազէտ տիրացուների ձեռնադրութեանը, հէնց սկզբից արգելք դառնալով «խաթրի համար» հատիսօսականներ կազմելուն:

3) Ճշդութեամբ կատարածել ամեն մի եկեղեցական օրինակատարութիւն՝ առանց խարութիւն դնելու չքաւոր և հարուստ ծխականների մէջ:

4) Խստիւ հսկել բոլոր եկեղեցիների և նրանց անօթների մաքրութեան վրա և այդ նպատակով իւրաքանչիւր եկեղեցում հիմնել առանձին գանձարան:

5) Բողոքական կամ կաթոլիկ հայերի հետ հաշտ ապրել և ընդհարումների տեղիք չը տալ:

6) Ապօրինի և չհաս ամուսնութիւնների առաջն առնել, ժողովրդին հասկացնելով դրանց պատճառած վնասները թէ բարոյական և թէ առողջական տեսակէտից:

Հայր սուրբը իւրաքանչիւր հարց ժողովականներին մատչելի օրինակներով բացատրելուց յետոյ՝ առաջարկեց բոլորին հետամուտ լինել անընդհատ ընթերցանութեան և առանձնապէս խորհուրդ տուեց կարդալ Պոստոլենկոի «Գաղափարական քահանայ» գիրքը և հետևել դրա հերոսի օրինակին: Փակելով ժողովը՝ նա պատուիրեց ճշդութեամբ կատարել բոլոր որոշումները և խոստացաւ մի և նույնը առանձին շրջաբերականով հրատարակել:

Ցանկալի է, որ այդպիսի ժողովներ յաճախ տեղի ունենային: Գուցէ դրանց միջոցով մեր քահանաները մի փոքր սթափվեն և գործ կատարեն:

Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Կ. Պոլսի, Տրապիզոնի և Բաթումի մէջ յարաբերութիւնները ընդհատված են: Օրինակ, Կ. Պոլսից Տրապիզոնի վրայով Բաթում եկող նաւերը մի քանի օր շարունակ չեկան: Կ. Պոլսից, սեպտեմբերի 20-ից գրած նամակը, որ պէտք է ստացվէր Թիֆլիսում 7 օրից յետոյ, ստացվեց միայն հոկտեմբերի 2-ին, ուրեմն 12 օրից յետոյ: Բացի դրանից, Բաթումից հաղորդում են, որ Բաթումից Տրապիզոն ուղարկված հեռագիրներին ոչ մի պատասխան չէ գալիս: Կ. Պոլսից, ամսի 20-ից ստացած մի նամակից երևում է, որ առևտրական շատ յարաբերութիւններ դադարած են:

—

Կանանց բարձրագոյն կուրսերում, փոխանակ 400-ի, բացված է 600 ուսանողուհիների տեղ և բացի դրանից որոշված է աւելի լայնացնել դասընթացքը:

—

Բժշկապետ Յ. Դասպարեանց ամարանոցից վերադառնալով, վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը:

—

Մեր հայ դերասանները բաղդ չունեն, և նախախնամութիւնը կարծես սահմանել է, որ նրանք միշտ «ջիբը ծակ» ունենան: Նիւթական կողմից մի շարք անպէտ ներկայացումներից յետոյ, վերջապէս մեր դերասանները որոշում են հոկտեմբերի 1-ին ներկայացնել «Սամէլ» պատմական պիէսան: Եւ ահա երեկոյեան դէմ ծախված են համարեա բոլոր տոմսակները, և դեռ տոմսակ ուզողները գալիս են ու գալիս... Մեր դերասանների ուրախութեանը չափ չը կայ... Բայց այդ ուրախութիւնը երկարատև չէր, որովհետև երբ ժողովուրդը հաւաքվեց, և ներկայացումը պէտք է սկսվէր, յանկարծ գաղը հանգչում է, և այլ ևս վառելու հնար չէ լինում: Ասում են, որ գազավառութեան կապալառու Այվազեանցի և մեքենավարի մէջ տարաձայնութիւն է սկսվում, և այդ պատճառով մեքենավարը անհետանում է. որքան որոնում են նրան, չեն գտնում: Այդ էր պատճառը, որ կիրակի երեկոյեան հայոց ներկայացումը չը կայացաւ: Եւ դերասանները ստիպված էին տոմսակների փողերը վերադարձնել:

—

Բագուի նաւթագործներից շատերը մտադիր են Նիժնի-Նովգորոդի ցուցահանդէսին մասնակցել, բայց գործում են առանձին-առանձին: Լաւ կը լինէր, եթէ Բագվում կազմվէր մի մասնաժողով, որ վերցնէր այդ գործի կազմակերպութիւնը և ունենար յատուկ գործակալներ Նիժնի-Նովգորոդում:

—

Կառավարութիւնը թոյլատրել է Սերգէյ Կազարով անունով մի պարոնի հրատարակել Վլադիկավկազում «Կաղբէկ» անունով գրականա-քաղաքական մի լրագիր, շաբաթը երեք անգամ:

—

«Терскія Вѣдомости» լրագրի ոչ-պաշտօնական մասին խմբագիր է նշանակված նախկին ցէնզոր Բէզօբրազով:

—

Ուրբաթ, սեպտեմբերի 29-ին, Թիֆլիսի նահանգական դատարանում դռնփակ քննվում էր մի քաղաքական գործ, այն է Թիֆլիսի քաղաքացի Դարչօ Մակարովը մեղադրվում էր այն բանում, որ նա խախտել էր իր հարազատ աղջիկ, 13 տարեկան Մարիայի կուսութիւնը և կենակցում էր նրա հետ: Նահանգական դատարանը մեղաւոր ճանաչեց Մակարովին և դատապարտեց նրան՝ զրկելով բոլոր իրաւունքներից, տաժանակիր աշխատանքներին ինն տարով, իսկ տաժանակիր աշխատանքների ժամանակամիջոցը լրացնելուց յետոյ, դատապարտվածը պէտք է յանձնվի մի վանքին Սիբիրում ցմահ՝ ամենածանր աշխատանքներ տալով նրան:

—

Այս տարի լրանում է Թիֆլիսի քաղաքային վարչութեան երկու անդամների ծառայութեան ժամանակամիջոցը: Սեպտեմբերի 29-ին վիճակ գցեցին վարչութեան երեք անդամների մէջ, և վիճակով դուրս եկան Իվանենկո և իշխան Պ. Արղուտինսկի-Դոլգորուկի:

—

Այս օրերս Թիֆլիս է եկել յայտնի իրաւաբան պրոֆէսօր Սպասովիչ:

—

Նահանգական վարչութեան կարգադրութեամբ մէշչանների աւագի ընտրութիւնը յետաձգված է, որովհետև մէշչանների դասակարգի կողմից ընտրված պատգամաւորների ծառայութեան ժամանակամիջոցը վաղուց լրացել է, և օրէնքով, հին պատգամաւորները չեն կարող մէշչանների նոր աւագ ընտրել: Այդ պատճառով առաջ դեռ նոր պատգամաւորների ընտրութիւն պէտք է կատարվի:

—

Թիւրքաց կառավարութիւնը, ինչպէս հաղորդում են «Кавказъ» լրագրին, հարցրել է Թիֆլիսի իր հիւպատոսից, թէ արդեօք չէ կարելի Ղարաբաղի ձիաներ գնել Անդրկովկասում: Թիֆլիսի հիւպատոսը դրական պատասխան է տուել Բ. Դրանը:

—

Ուրբաթ օր, սեպտեմբերի 29-ին, Թիֆլիսի օպերային խումբը ներկայացրեց «Հրէուհի» օպերան: Էնկվիստ և Մարլադ երգչուհիները և Օսթրովիդով երգիչը աչքի էին ընկնում իրանց աջող երգեցողութեամբ: Էնկվիստ ուժեղ և մշակված ձայն ունի, երգում է ազատ, գիւրութեամբ վերցնելով բարձր նոտաներ: Խմբի մէջ լաւ երգիչներ քիչ են:

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 10-ին Գորու գաւառի Վաղա գիւղում տեղական փոխանորդը բացեց եկեղեցական-ծխական դպրոց, որի գեղեցիկ շինութիւնը կառուցել են իշխան Բէգթաբէգեան ամուսինները, և այդ պատճառով էլ դպրոցը կոչվում է «Բէգթաբէգեան»: Թէ որքան մեծ էր այդ գիւղում դպրոցի կարիքը, երևում է նրանից, որ հէնց երկրորդ օրը հաւաքվեցին 50-ից աւելի աշակերտներ: Բացման օրը մի մեծ տօն էր գիւղացիների համար: Հոկտեմբերի մէկին գաւառիս Ալ գիւղում բացվելու է եկեղեցական-ծխական դպրոց, որի պահպանութեան համար Յեխինվալ գիւղի Բարեգործական ընկերութիւնը յատկացրել է 140 ռուբլի տարեկան նպաստ: Ուրախութեամբ արձանագրում ենք, որ գաւառիս Ատոց գիւղի 19 տուն հայ ժողովուրդն էլ չը կամեցաւ յետ մնալ իր հարևան գիւղերից, և այս օրերս խնդրամատոյց եղաւ հոգևոր իշխանութեան, իրանց գիւղում դպրոց բաց անելու համար»:

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ գաւառի Զալթը գիւղից մեզ գրում են. «Զալթը գիւղը Նոր-Նախիջևանից 18—20 վերստ հեռաւորութեան վրա գտնվող 5 գիւղերից մէկն է: Անցեալ տարի այստեղ բացվեց օրիորդաց ուսումնարան: Տղայոց ուսումնարանն էլ 500 տուն բնակիչ ունեցող գիւղի համար փոքր լինելով, այս տարի մեծացրին: Սեպտեմբերի 19-ին, ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեամբ, օրհնեցին նոր ուսումնարանը»:

—

ԳԷՋՐԼՈՒ գիւղից մեզ գրում են. «Այս տարի ցորենի բերքն առատ է: Խալվարը, որ անցեալ տարի ծախվում էր 30—40 ռուբլի, այժմ դարձել է 10—12 ռուբլի: Որքան առատ է ցորենը, նոյնքան չոր ասված հիւանդութիւնից վնասված են բամբակն ու խաղողը: Վերջինիս գինն այժմ երեք անգամ բարձր է, քան անցեալ տարի էր: Մեր գիւղացիք վերջերս սկսել են առանձին ուշադրութիւն դարձնել կաղամբի, սեխի և ձմերուկի մշակութեան վրա»:

—

ԴՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Անցեալ օրերը, Վէլէկա կայարանի ուրեադնիկ Թալիբը կամենալով զինաթափ անել Փիրվահիդ գիւղացի մէկին, վրա են թափվում և սրերով տեղն ու տեղը սպանում են Թալիբին: Այդ գործի պատճառով երեք մարդ է կալանաւորված»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՔԵԱՄԻԼ-ՓԱՇԱ

—

Թիւրքիայի նոր մեծ վիզիր Քեամիլ-փաշան ծնվել է երեանական թաւականներին Կիպրոս կղզու վրա, ուր նրա հայրը ծառայում էր օֆիցերի պաշտօնով: Քեամիլ-փաշան իր ուսումն առաւ Կիպրոսում և ապա բնակութիւն հաստատելով Կ. Պոլսում, մտաւ պետական ծառայութիւն: Նա շատ արագ սկսեց բարձրանալ պետական ծառայութեան մէջ: 1882 թուից մինչև 1885 թիւը նա վակուֆների մինիստր էր:

Երբ իշխան Ալէքսանդրը բուլգարական գործերը շարժեց դէպի Արևելեան Ռումելիա, Քեամիլ-փաշան մեծ վիզիր նշանակվեց Սաիդ-փաշայի տեղ: Այժմ նա կրկին փոխարինեց Սաիդին, միայն այն զանազանութեամբ, որ այս անգամ Սաիդ-փաշան պաշտօնանկ եղաւ ոչ թէ բուլգարական գործերի համար, այլ հայոց հարցի շնորհով:

Քեամիլ-փաշան առհասարակ տաղանդաւոր մարդու համբաւ ունի: Նա լաւ խօսում է անգլիերէն, յունարէն և արաբերէն լեզուներով և անգլիասէր է համարվում:

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑ

—

Էրզրում, սեպտեմբերի 25-ին

Ամսիս 23-ին, երեկոյեան ժամը 12-ին (ըստ Թրքականի) դանակի հարուածով սպանուեցան քաղաքիս մէջ երկու հոգի. մին յայտնի մասնիչ՝ փաստաբան Յարութիւն էֆէնդի Տ. Սարգսեան և միւսը նորան ուղեկից՝ Սիմոն Պօղոսեան վաճառական. երկուքի հարուածն ևս մահացու էր: Սպանողները չը բռնուեցան և յայտնի չեն. թէև ոմանք ձերբակալուեցան, բայց առանց ապացոյցի:

Յարութիւն էֆէնդի նախ ուսուցիչ, ապա կառավարական քարտուղար և վերջը ինքնուս փաստաբան, քիչ ատենուան մէջ թիւրք պաշտօնէից համակրանքը վաստակած էր և կլորիկ գումարի մը տէր դարձած: Գաղտնիքն այս էր, որ ոստիկանութեան հետ բարեկամութիւն մշակած հայի արիւնով կը սնանէր. վերջը Քեաղիմ պէյ ոստիկանապետի մտերիմն էր և ընկեր: Անմեղ մարդոց վրայ մուր քսել և կաշառարութեան միջնորդի դեր ստանձնելով դրամը անոնց հետ բաժնել՝ ահա իր գործը. գրասենեակը ոստիկաններու խորհրդարան մըն էր, ուր կը գրէին իրենց տեղեկագիրներ: Հազարաւոր զոհեր ունէր բանտերու անկիւններ, աքսորավայրերու մէջ և սև հողին տակ:

Վերջերս հաստատապէս յայտնի էր, որ Շիշմանեան սրբազանի տուած քարոզները թարգմանելով կառավարութեան յանձնողն ալ այս անխիղճն էր: Իր մահուան լուրը ուրախութեամբ ընդունեց հայ ժողովուրդը:

Միւսի մահուան պատճառները տարակուսանքի տակ են. ոմանք պարզապէս զոհ մը կը նկատեն առաջնոյն, զայն պաշտպանած լինելուն համար. արդէն իր վերջը ապրիլն էր, որ մահացու չէր, այլ վախէն կաթուածահար եղած է: Ոմանք ալ ծանր պատճառներ հաստատել ջանալով՝ կանխամտածած գործ մը կը նկատեն:

Ա—ը

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Պոստոն, սեպտեմբերի 4/16-ին

Քաղաքիս նշանաւոր հարուստներէն մի քանին յանձնախումբ մը ընտրած են ի նպաստ Սամոյ բացուած հանգանակութեան նոր մը դրամ մը տալու: Պոստոնի մէջ հանգանակուած գումարը 1000 տոլարը անցեր է, ինչպէս կը ցուցնեն լրագրաց հրատարակած ցուցակները: Նիւ-Եորքի մէջ սկսած հանգանակութիւնն ալ յաջող կերթայ: Կատարուած ջանքերը, աշխատողներու անունները բաւական են մեզ յուսալ տալու, թէ Սամոյ թշուառ հայութիւնը մի կարեոր նպաստ պիտի ընդունի Նոր Աշխարհէն: Այս առթիւ գնահատելի ծառայութիւն կը մատուցանեն տեղւոյս միսիոնարական թերթերն ու ընկերութիւնները. այս վերջինները կրնան ուղղակի իրենց միսիոնարաց ձեռամբ բաշխել տալ հանգանակութեանց արդիւնքը. այդ նպատակաւ միսիոնարական շրջաններու մէջ զուտ հանգանակութիւն մը բացուած է:

Հանգանակութեանց առթիւ լրագրաց յուզումը աստիճան մ'ալ աւելացաւ: Կարելի չէ այժմ հայոց վրա գրուած ամեն յօդուած կարդալ, այժմ ստիպուած ենք միայն կարևորներն ուշադրութեան առնել: Երէկ «Neu-York World» անուն թերթը մի ընդարձակ նամակ հրատարակեց Հայաստանի իր մասնաւոր թղթակցէն: Յօդուածի ճակատը դրուած է մի վիրաւոր սասուն-

ցու մեծագիր պատկերը, որոյ մարմնոյն վրա կերևէին թիւրք զինուորներու քաջագործութեանց հետքերը։ Նամակը մանրամասն կը նկարագրէ վանեցւոց անոտանելի դրութիւնը, սասունցի թափառաշրջիկներու թշուառութիւնը և առհասարակ ամբողջ թիւրքաց Հայաստանի դժոխային վիճակը։

Նամակին վերջը դրուած է Աղթամարայ կաթողիկոսին մի բողոքագրին թարգմանութիւնը, որով Խաչատուր կաթողիկոսը Իզմիրլեան պատրիարքին կը բողոքէ վարչական հարստահարութեանց և քրդական բարբարոսութեանց դէմ։

Միսիոնարական թերթեր խստիւ կը սպասնջեն, որ ամերիկեան կառավարութիւնը ճնշում բանեցնէ թիւրք կառավարութեան վրա, որպէս զի չուտով կարնոյ և խարբերդի նորընտիր հիւպատոսներու արտօնագրերը տրուին։ Այդ պարոնները յուլիսէն ի վեր Պոլիս կը սպասեն այդ թանկագին պաշտօնագրերուն համար։ Կերևի թէ Սուլթանը միայն հայկական բարենորոգմանց խնդրոյն հետ չէ, որ այնքան դանդաղ վարուել կուզէ։ Միւս կողմանէ Ամերիկայի քաղաքացի դարձած հայեր Թիւրքիա դարձած ատեն սահմանագլխին կամ Պոլսոյ մէջ կը ձերբակալուին իբր յեղափոխական, թէև այժմ յեղափոխականները բանտերէն կարձակուին։

Մեծանուն Թրքի ազգու ընթացքին չնորհիւ այդ հայերուն ամենն ալ կաղատուին (?) միայն այն պայմանաւ, որ Թիւրքիան պատուեն իրենց բացակայութեամբ։ Այնքան թոյլ է Ամերիկայի կառավարութեան ընթացքը այս մասին, որ տեղւոյս հայերէն չատ քիչերն կը փսխեն իրենց հպատակութիւնը, քանի որ դա գործնական օգուտ մը չունենալէ զատ նոր վարձանքներ կրնայ բերել իրենց գլխուն, երբ տուն վերադառնան։ Թիւրքահպատակ հայեր ալ չեն կըրնար հայրենիք դառնալ։ Բաղաքիս թիւրք հիւիւպատոսը վեց ամիսէ ի վեր արտաքին գործոց պաշտօնէութենէն նամակի կը սպասէ անցագիր տալու համար!!!

Շատեր կան հոս հայրենիք դառնալու անհամբեր, բայց քիչեր, որ վտանգները արհամարհելու քաջութիւն և թիւրք պաշտօնեաները ի հարկին կաշառելու չափ դրամ ունին։ Ինչպէս գաղթականներս արտում տխուր լուրի կը սպասենք, երբեմն յուսալից, երբեմն վհատեալ, երբեմն ուրախ, երբեմն կատաղի. հայրենիք դառնալու, երջանիկ օրեր տեսնելու փափաքներով վառած կը սպասենք ու կը սպասենք, բայց օրեր կերթան, ամիսներ կանցնեն, դեռ ոչինչ։ Մինչև երբ...

Արմէն

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օլիմպիական խաղերը Ա թէնքում։ Նախապատրաստական աշխատանքները օլիմպիական խաղերի համար, որոնք պէտք է շարունակուին Յունաստանի մայրաքաղաքում 1896 թուի ապրիլի 5-ից մինչև 15-ը, աջողութեամբ առաջ են գնում։ Այդ խաղերին ներկայ կը լինեն բոլոր եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները։ Այդ ձեռնարկութեան դրամական կողմը արդէն ապահովված է։ Խոշոր և մանր գումարներ ստացվում էին ամեն կողմից։ Յոյն հայրենասէր Ավերօվ, որը բնակվում է Ալէքսանդրիայում, այդ նպատակով նուիրեց 600,000 դրախմ։ Այդ գումարը յատկացված է պանաթէնեան արշաւահանդէսը վերականգնելու համար։ Յունաց կառավարութիւնն ևս խոստացաւ իր բարոյական օգնութիւնը։ Մինչև այժմ հաւաքված գումարը մէկ միլիոն դրախմի է հասնում։ Տօնախմբութեան ամենահաւատուր մասերից մէկը կը լինի հսկայական գոտէմարտը արշաւահանդիսում, որը կազմակերպված կը լինի հին ձևով։ Յատուկ յանձնաժողովը, որին յանձնված է հսկել այդ աշխատութիւնների վրա, կազմակերպված է տեղական և օտարազգի հնագէտներից և ճարտարապետներից, որոնց թվում գտնվում են և Ա թէնքի եւրոպական հնագիտական բոլոր դպրոցների դիրեկտորները։ Այդ ձեռնարկութեան գլուխ է կանգնած յունական թագաժառանգը։ Օտար պետութիւններից չատերը ևս բարոյապէս նպաստում են այդ գործին։ Եւ այդ պատճառով հիմք կայ կարծելու, որ հին օլիմպիական խաղերը կենդանացնելու այդ առաջին փորձը աջողութեամբ կը պսակվի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՐԻՎԷԼ, 30 սեպտեմբերի։ Այստեղ հասաւ արդարադատութեան մինիստրը։

ԴԱՐՄՇՏԱՏ, 30 սեպտեմբերի։ Մեծ իշխան Սերգի Ալէքսանդրովիչ իր ամուսնու հետ և Մեծ իշխան Պավել Ալէքսանդրովիչ ճանապարհ ընկան Պետերբուրգ։

ՊԱՐԻԶ, 30 սեպտեմբերի։ Մեծ իշխան կոնստանտին կոնստանտինովիչ իր Ամուսնու հետ և իշխան Լոբանով-Ռոստովսկի ներկայ էին ակադէմիայի նիստին։ Նոցա Կայսերական Բարձրութիւնները ճանապարհ ընկան դէպի Ջէնովա։

ԲԵՐԼԻՆ, 30 սեպտեմբերի։ Այսօր այստեղ կը հասնի իշխան Լոբանով-Ռոստովսկի, որին կը դիմաւորի և ճաշի կը հրաւիրի կայսերական կանցլերը։

ՊԱՐԻԶ, 30 սեպտեմբերի։ Իշխան Լոբանով-Ռոստովսկի սեպտեմբերի 29-ին երեկոյեան դուրս եկաւ Պարիզից։

ԵՕԿՕՀԱՄԱ, 30 սեպտեմբերի, Սէուլում տեղի ունեցած ապստամբութեան պատճառով, այնտեղ է ուղարկված կոմոդոր մինիսարը։ Կարծում են, որ թագուհուն սպանել են բարենորոգումների հակառակորդները։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 1 հոկտեմբերի։ Նահանգական դատարանը դատապարտեց յայտնի վաշխառու ազնական Խրիստովսկուն՝ զրկելով բոլոր իրաւունքներից, աքսորել Արխանգելի նահանգը։ Վաշխառութեան վերաբերեալ գործը առաջին անգամ էր քննվում նոր օրէնքով։ Խրիստովսկին երկու տարի առաջ վաշխառութեան համար աքսորվեց նահանգից։

ԲԵՐԼԻՆ, 1 հոկտեմբերի։ Իշխան Լոբանով-Ռոստովսկի հասաւ այստեղ սեպտեմբերի 30-ին երեկոյեան։ Կիսապաշտօնական լրագիրները հաղորդում են, որ իշխանին կընդունի գերմանական կայսրը Գուբերտուսշտոկում հոկտեմբերի 1-ին։

ԲԱԳՈՒ, 2 հոկտեմբերի։ Կասպիական ընկերութեան ֆօնտանի հրդեհը, որ շարունակվում էր երկու շաբաթից աւելի և մեծ վնասներ պատճառեց, վերջապէս հանգցրեց մի լեռնային ինժենէր՝ իր գտած սիստեմով։

Կ. ՊՕԼԻՍ, 2 հոկտեմբերի։ Իզմայելի շրջականերում, ասիական Թիւրքիայում, տեղի ունեցան անկարգութիւններ, որոնց ժամանակ սպանվեցին և վիրաւորվեցին մի քանի մարդիկ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 29-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	70 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	22½ »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	62½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	40
Մաքսային կուպոններ — .	148 »	— »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկոնտ — . .	5½	7½%
4% պետական բէնտա	97⅝ »	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . .	161 »	— »
Երքին 5% առաջին փոխառութ.	272 »	—
— — երկրորդ —	232 »	— »
Գրաւ. թղթ. — — .	212 »	50 »
4% պետական երկաթուղ. բէնտա.	101 »	75 »
5% Ներքին փոխառութեան . . .	97 »	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	99 »	75 »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	100½ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	150 »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	101 »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	— »
Օդէսայի — —	100 »	25 »
Թիֆլիսի — —	97 »	50 »
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 6%	101 »	— »
— — — 5% . .	99½ »	— »
— — Բուխարայի 6% . .	101 »	— »
— — — 5% . .	99½ »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա Զ Դ

Մօտ մի ամիս է, որ անյայտացել է 14 տարեկան մի երեխայ, ԱՐՇԱԿ անունով, որն աշակերտ էր Մօլոկանկի փողոցում գտնվող կօշկակար Կարապետ Օհանեսովի մօտ։ Ծնողների խօսքով, երեխան յաճախ գանգատվում էր իր վարպետի կոպիտ վարմունքից։ Վերջին անգամ նրանից ծեծվելով երեխան յայտնեց մօրը, որ ինքը այլ ևս չի գնայ բանելու. երբ մայրը սկսեց, որ նա չը թողնէ արհեստը, երեխան վճռողապէս հրաժարվեց գնալ գործի և այն օրից անյայտացաւ։ Երեխայի հայրը, Աստուր Աբրահամեանց, ծառայում է Դիղուբէ գտնվող մանրավաճառ Էյնաթեանցի մօտ։ Որ և է տեղեկութիւն ունեցողներին խնդրվում է յայտնել հօրը, այդ հասցէով։ (№ 113) 1—3

ՆՈՐԱՇԷՆԻ (Ալէքսանդրօպոլի գաւառ) նորաբաց դպրոցի օգտին տեղացի Պօղոս Թաթոյեանցը իր հանդուցեալ եղբօր յիշատակի համար նուիրեց երեսուն բուբլի, ցոյց տալով ժողովրդին, որ փոխանակ մեծածախս քելեխներ կազմելու, կարելի է օգնել ուսումնարանին։

1—1 Ուսուցիչ՝ Տիգ. Թերզեանց

ԲԺՇԿԱՊԵՏ ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՑԱՆԻՆ

բացակայութեան պատճառով

Նրա

ՋՐԱ-ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ

(Սօլօլակ, Սերգիևսկի փողոց, № 14)

Ամառվայ ընթացքում հիւանդներին կընդունի

ԲԺՇԿԱՊԵՏ

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀԳԱՐՈՆԵԱՆՑ

կանանց և ջղային հիւանդութիւնների

Ամեն օր, 1—2 ժ. ցերեկվայ և 7 ժամ երեկոյեան

Բուժարանում, բացի էլէքտրական վանաներից, դուշերից, բժշկական մարմնաշարժութիւնից—կին հիւանդների մասաժ, որի համար ընդունելութեան ժամերին սերկայ են լինում կին և աղամարդ մասաժիստներ.—մասսաժիստ ԽՈՍՐՕՎԵԱՆՑ և կին մասսաժիստ ԿՐԱԵՎՍԿԱՑԱ։

(№ 71) 19—30

Վաճառվում են

Լևոն Սարգսեանցի

„ԱՅՑ ԹԻԻՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ“

Գինը 60 կոպ.

„ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ“

Գինը 20 կոպ.

Սարգիս Սարգսեանցի

„ԱԳՈՒԼԵՅՈՑ ԲԱՐԲԱՌԸ“

Գինը 2 բուբլի։

Կարելի է ստանալ Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցում։ (№ 94) 5—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վ. օրենցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուչաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիխ, աբեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ

Ե. Ս. ՖՐԱՆՑԻՈՒՍ

տեղափոխվեց Վելիամինովսկայա փողոցը տ. № 14. Բաղաքային Դումայի հանդէպ։

ԱԿԱՆՋԻ, ԲԹԻ և ԿՈԿՈՐԴԻ հիւանդութիւններ ունեցող հիւանդների ընդունելութիւնը տեղի է ունենում 5—7 ժամ երեկոյեան։

(№ 106) 7—20

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

տեղափոխվել է Գոլովինսկի պրոսպեկտ, № 28, տուն Ադամեանի։

Երեխաների, ներքին և կոկորդի հիւանդութիւններ. երեկոյեան 5—7 ժամը։

(№ 103) 7—10

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Սրանով պատիւ ունիմ յայտնելու Թիֆլիսի հայ հասարակութեան, որ ես յանձն եմ առնում տան փլատակների տակ մնացած և շինութիւններից վայր ընկնող թշուառ զոհերի թաղման ծախսը, իւրաքանչիւրի համար 25 բուբլի տալով քահանային, եթէ միայն քահանան կը ներկայացնէ ինձ Թիֆլիսի սրբազան առաջնորդի և կամ կոնսիստորիայի կողմից ժողովրդի ջքաւորութեան վաւերագիրը։

(№ 112) 1—2 ԾՂԱԼՕՐ ԻՎԱՆԻՉ ՂՈՐՂԱՆԵԱՆ

„ՇԱՒԻՂԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Թէհրանի „Շաւիղ“ շաբաթաթերթի խմբագրութիւնը յայտնում է բոլոր հայ հեղինակներին և հրատարակիչներին, որ իրան ուղարկված գրքերի համար „Շաւիղը“ կը յայտարարի և յանձն կառնի Պարսկաստանում տարածելու աշխատութիւնը։ Գրքեր և հրատարակութիւններ պիտի ուղարկել մի մի օրինակ խմբագրութեան։ Խմբագրութեան հասցէն է. Rédaction „Chavigh“ Téhéran (Perse) (№ 87) 4—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նազօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(ա. ա.) № 62 23—25

Дозволено цензурою, Тифлисъ, 2 Октября 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.